



ԱՌԱՋՆԱՅԻՆ ԹԻՒՆՔԻՒՆ ԵՄ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Մարտ 28, 1990

Հոգեշնորհ
Տ. Հայկազուն Վրդ. Մելգոնեան
Հովի Ա. Երրորդություն Եկեղեցույ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Ձեռնարկում:

Սիրելի Հայր Սուրբ,

Ստացուած է Առաջնորդ Սրբազան Հօր ուղղուած Մարտ 12, 1990 թուակիր ձեր նամակը:

Այս նամակով կը տեղեկացնէք թէ Մարտ 4-ին, 1990, տեղի ունեցած է համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը, եւ այդ առթիւ ընտրուած են նաեւ Ծխական Խորհուրդի հինգ անդամները: Կու տաք բուեարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացումը:

Այս գրութեամբ կը փափաքիմ տեղեկացնել որ կը վաւերացուի Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը՝


Նանսի Պասմանեան
Լարի Տէր Յակոբեան
Կարօ Կարիպեան
Պերճունի Հայկազեան
Մըլլ Սանթրոբեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթեմ առողջութիւն եւ ձեր բոլորին եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն:

Աղօթակից

Խաժակ Վրդ. Պարսամեան
Առաջնորդի Փոխանորդ



Phone (215) 663-1600

HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH

101 Ashmead Road, Cheltenham, Pa. 19012

Very Rev. Haigazoun Melkonian
Pastor

Դեկտեմբեր 6, 1990

Գերաշնորհ
Տ. Խաժակ Եսա. Պարսամեան, Առաջնորդ
Առաջնորդութիւն Հայոց Ամերիկայի
630 Second Avenue
New York, New York 10016

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Յանուն Սուրբ Երրորդութիւն Հայց. Առաքելական Եկեղեցիոյ Հովիւն, Միական
Խորհուրդը եւ բարի հաւատացեալ ժողովուրդը կու գամ մեր խորին շնորհակալութիւնները
յայտնել Ձեր հովուական այցելութեան համար : Բոլորս շատ գոհ մնացինք եւ Ձեր այցը
նոր խանդավարութիւն մը ստեղծեց մեր մէջ :

Կ'աղօթենք որ Տերը Ձեզի պարգեւէ առաջութիւն, արեւշատութիւն եւ նորանոր
յաջողութիւններ :

Մատչիմ ի համբոյր Ա. Աջոյդ՝

Հայկազուն Վրդ. Մեկկոնեան

Ս. Երրորդութիւն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցի



DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
 ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

BISHOP KHAJAG BARSAMIAN, PRIMATE

Թի 740
 Փետրուար 27, 1991

Հոգեշնորհ
 Տ. Հայկազուն Ծ. Վրդ. Մելգոնեան
 Հովի Ա. Երրորդութիւն Եկեղեցոյ
 Չէլթընհամ.

Սիրելի Հայր Հայկազուն,

Այսօր ստացանք մահուան բօթը ձեր սիրեցեալ մեծ մօր՝ Տիկին Զորայօ Մարտիկեանի: Ձեզի եւ ձեր ընտանեկան պարագաներուն հետ միասին մենք եւս կը բաժնենք կորուստը բարեպաշտ քրիստոնէայ կնոջ մը, գորովալից մօր մը եւ հին սերունդի պատկանող ազգասէր հայու մը: Գիտնալով ձեր սերտ կապերը ձեր ընտանիքի անդամներուն եւ մանաւանդ ձեր մեծ մօր հետ, կրնանք երեսակայել այն խորունկ ցաւը՝ զոր կը զգաք այս րոպէին:

Դուք՝ ձեր նուիրումով եւ ազգասէր գործունէութեամբ քանիցս փաստաբ էք որ ձեր պաշտօնի գիտակցութենէն եւ պատասխանատուութենէն անդին ունիք հայկական ոգի մը, որ անտարակոյս ծառանգած էք ձեր նախնիներէն եւ մանաւանդ Տիկին Զորայօն: Քանիցս լսած ենք ձեր բերնէն որ ան եղած է ձեզ մղողը որպէս զի յաճախէք եկեղեցի եւ մտնէք Աստուծոյ եւ ազգային ու եկեղեցական ծառայութեան մէջ:

Ձեր միջոցաւ ճանչցած էինք Տիկին Զորայօն որպէս առաքինի կին եւ նուիրալ հայ քրիստոնէայ մը: Ան երկար տարիներ իր ծառայութեան բաժինը բերաւ մեր ազգային ու եկեղեցական կեանքէն ներս եւ այժմ կը մեկնի այս անցաւոր կեանքէն «լի աւուրքք եւ գործովք բարութեան»: Իր կորուստը պէտք չէ ընկճէ ձեզ եւ ձեր ընտանիքի միւս անդամները, այլ անկէ մնացած զեղեցիկ յիշատակներ թող լինին բուրեան ձեր կեանքին մէջ:

Մեր ցաւակցութիւնը կը յայտնենք ձեր ընտանիքի բոլոր անդամներուն եւ սրտանց կ'աղօթենք որ Տէր Աստուած մխիթարութիւն տայ ձեզի եւ Տիկին Զորայօի մաքուր հոգին արժանացնէ երկնից արքայութեան լոյսերուն:

Սիրոյ ողջունի

Խաժակ Եպս. Պարսամեան

Խաժակ Եպս. Պարսամեան
 Առաջնորդ



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Թի 378
Մարտ 18, 1991

Հոգեշնորհ
Տ. Հայկազուն Վրդ. Մելգոնեան
Հովի Ա. Երրորդութիւն Եկեղեցոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Չեղջնհամ.

Սիրելի Հայր Հայկազուն,

Ստացում եմ համայնքի Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Մարտ 12, 1991 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքի Տարեկան Անդամական Ժողովը գումարում է Փետրուար 24, 1991-ին, եւ այդ առթիւ ընտրում եմ Ծխական Խորհուրդի վեց անդամներ: Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացուի Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

- Սթիւրն Աճեմեան
- Արսէն Խանամիրեան
- Արամ Գըմգըմեան
- Պրայըն Փէքճեան
- Մորն Թէրքանեան Կրտ.
- Մայքըլ Թոքմանեան


Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնուի որ Անդամական Ժողովի դիւանի ընտրութիւնը պէտք է կատարուի գաշտնի քուէարկութեամբ, եւ Ծխական Խորհուրդի տեղեկագիրը պէտք է ստորագրուի Հովիին, Ատենապետին եւ Ատենադպիրին կողմէ:

Կը շնորհատրեմ Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթեմ որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքի անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Աղօթակից

Հայկազուն Մ. Վրդ. Նանարեան
Առաջնորդի Փոխանորդ



Holy Trinity Armenian Church

101 Ashmead Road

Cheltenham, Pennsylvania

VERY REV. HAIGAZOUN MELKONIAN

Pastor

1966 - 1991

25th Anniversary of Consecration

Դեկտեմբեր 17, 1991

Գերաշնորհ

Տ. Խաժակ Եպ. Պարսամեան, Առաջնորդ

Առաջնորդութիւն Հայոց Ամերիկայի

630 Second Avenue

New York, New York 10016

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Շնորհակալութեամբ ստանցամք Ձեր Դեկտեմբեր 4, 1991ի թուակիր շրջափակմանն ու դրկուած ծրարը՝ որուն մէջ կը գտնուէր երկու <<վիտին>>ները, մին՝ Ս. Էջմիածնի Սրբալոյս Միւռոնի Օրհնութիւնը իսկ միւրը՝ Երասաղէմի Առաքելական Սուրբ Աթոռէն :

Վստահ եմք որ այս <<վիտին>>ները մեր քարի հաւատացեալ ժողովուրդին պիտի ներշնչէ եւ անոնց ու մեր կողմէն խորին շնորհակալութիւն կը յայտնենք :

Մատչիմ ի համբոյր Ա. Աջոյ՛

Հայկազուն Մ. Վրդ. Մելգոնեան, Հովի
Յանուն Միական Խորհուրդի

Մ. Երրորդութիւն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցի